



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 հոկտեմբերի 2011թ. թիվ 290-Ն

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԻ (ԶԻՆԱՆՇԱՆԻ) ԵՎ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՍԿԵ ՀՈՒՇԱՄԵԴԱԼԻ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1789-Ն որոշման 3-րդ կետով հաստատված թիվ 1 հավելվածի 8-րդ կետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ են.

1. Հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի խորհրդանիշի (զինանշանի) նկարագրությունը՝ համաձայն թիվ 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի խորհրդանիշի (զինանշանի) ձևը՝ համաձայն թիվ 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի ոսկե հուշամեդալի նկարագրությունը՝ համաձայն թիվ 3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի ոսկե հուշամեդալի ձևը՝ համաձայն թիվ 4 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի հուշամեդալով պարգևատրման դեպքերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի կողմից:

3. Հանձնարարել սույն որոշումը «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ և 33-րդ հոդվածների համաձայն պետական իրավական փորձաքննության ենթարկելու և պետական գրանցում ստանալու նպատակով ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2011թ. հոկտեմբերի 5
ք.Վանաձոր

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
խորհրդանիշի (զինանշանի) նկարագրություն

Այն պատկերում է հզոր թևերին հենված արծիվ (ուժի և թռիչքի խորհրդանիշ), որի աջ թևին խաչ է (քրիստոնեության խորհրդանիշը), ձախ թևին՝ հայերի արիացի լինելու խորհրդանշանը: Արծվի աչքը նման է բաց պատուհանի: Արծվի կրծքից դեպի աջ պատուհանը (մեծ աշխարհ, տիեզերք) ձգվում են երեք ճանապարհ, որոնք, համապատասխանաբար, ունեն մեր պետական դրոշի գույները կարմիր, կապույտ, նարնջագույն: Դրանցից ներքև արծվի կրծքին գրված է “Լոռու մարզ”: Մարզի անվան տակ հարթաքանդակի (բարելիեֆ) ձևով պատկերված են ինը խորհրդանշական թասեր, որպես լինելության, առատության և հյուրասիրության խորհրդանիշ: Արծվի որովայնի մասում պատկերված են Հաղպատի վանքին քանդակված Սմբատ և Գուրգեն թագավորները՝ ձեռքներին վանքի մանրակերտը: Այս պատկերը, որպես հավատքի խորհրդանիշ, պաշտպանված է արծվի թևերի հովանու տակ, իսկ հզոր ոտքերն ամուր պահում են հասկը (դեղին գույն) աշխատանքի ու առատության խորհրդանիշը և կաղնու տերևը (կանաչ գույն)՝ մարզի անտառների, բնության խորհրդանիշը:

Զինանշանն ընդունվել է 2003թ.-ի հունիսի 5-ին Լոռու մարզպետարանում մարզի զինանշանի համար հայտարարված մրցույթում: Հեղինակն է՝ նկարիչ Խաչիկ Ղարաբեկյանը:

ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՃԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված 2.
ՀՀ Լոռու մարզպետի
2011թ. հոկտեմբերի 5-ի
թիվ 290-Ն որոշման

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
խորհրդանիշի (գինանշանի) ձևը



ՀՀ ԼՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

A handwritten signature in black ink, written over a yellow circular stamp. The signature is stylized and appears to be 'A. M. N. H. Y. Z. A. N.'.

Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի ոսկե
հուշամեդալի նկարագրություն

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի ոսկե հուշամեդալը
50մմ տրամագծով, 4մմ հաստությամբ արծաթից շրջանաձև ձուլվածք է՝
ոսկեզօծված և գունավոր արձնապատմամբ:

Մեդալի երեսին Լոռու մարզի զինանշանն է, նրա ֆոնին՝ աջ և ձախ ձգվող,
ծածանվող եռագույն դրոշը: Ներքևի եզրերով աջ և ձախ թևավորումներով
դափնեճյուղերը ձգվում են վեր և կորակամար ընդհուպ մոտենում միմյանց:

Մեդալի դարձերեսին կանաչ գույնով արձնապատված է Լոռու մարզի
քարտեզային ուրվապատկերը, որի վրա կետ-նշանով սեպվում է մարզկենտրոն
Վանաձորի տեղադիրքը:

Մեդալի կողեզրին, լատինատառ, այբբենական հաջորդականությամբ (A-ից
Z) փորագրվում է սերիայի տառը և հերթական եռանիշ համարը 001-ից սկսած:


Հուշամեդալի հեղինակն է արծաթագործ Արսեն Սիրեկանի Ամիրխանյանը:

ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի ոսկե
հուշամեդալի ձևը



ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ